

**ԱՆՂՐԱՆԻԿԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՍԻՍԻԱՆՈՒՄ ՄՂՎԱԾ ԿՈՒՎՆԵՐՆ
ԸՆԴՂԵՄ ԹՈՒՐՋԵՐԻ ԵՎ ԱՂՐԲԵԶԱՆՑԻՆԵՐԻ
(1918 Թ. ՕԳՈՍՏՈՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ)**

Ա. Յ. ՍԻՍՈՆՅԱՆ

Նախիջևանում տաճիկ-մուսավաթական բազմաքանակ ուժերի դեմ մղված կռիվներում անհաջողություն կրելով՝ ազգային հերոս զորավար Անդրանիկը 1918 թ. հուլիսի վերջերին անցել էր Չանգեզուր: Օգոստոսի 4-ին նա իր Հարվածող զորամասով և շուրջ 30.000 արևմտահայ ու նախիջևանահայ գաղթականներով հասնում է Գորիս քաղաք:

Ծանրագույն վիճակում էր հայտնվել Արցախի և Չանգեզուրի հայությունը: Հայկական այդ երկրամասերը համարելով Ադրբեջանի անբաժանելի մաս՝ օսմանյան զավթիչները և մուսավաթական կառավարությունը հայ բնակչությունից պահանջում էին հպատակվել, զինաթափվել ու անվերապահ ենթարկվել Բաքվին:

Չանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի խնդրանքով գավառի գերագույն զինվորական հրամանատարի լիազորությունները ստանձնած Անդրանիկի ղեկավարությամբ դաժան կռիվներ սկսվեցին թշնամու դեմ¹:

1918 թ. օգոստոսի վերջերից մինչև սեպտեմբերի վերջերը երկարատև կռիվներ ծավալվեցին հատկապես Չանգեզուրի գավառի Միսիանի շրջանում:

Մինչ մուսավաթական զորքերը արևելքից Չանգեզուր մտնելու նոր ուղիներ էին փնտրում, օգոստոսի կեսերին Միսիանում լուր տարածվեց, թե Խալիլ բեյի հրամանատարությամբ Նախիջևանի երկրամասը ռազմակալած օսմանյան ուժերը, մեծ համալրում ստանալով, պատրաստվում են հարձակվել շրջանի վրա:

Միսիանի շրջանի մոտ 25 մեծ ու փոքր թուրքաբնակ բնակավայրերի բնակիչները 1918 թ. ամռանը այլևս նախկին խաղաղ հողագործները չէին, այլ ներքաշված էին դրացի հայերի հետ ազգամիջյան վեճերի ու կռիվների մեջ: Այդ գյուղերում տաճիկ կոմիսարների, մուսավաթական բջիջների և տեղական զինված բանդաների մասնակցությամբ տենդագին աշխատանք էր սկսվել՝ օսմանյան զորամասի ներխուժելու դեպքում թիկունքից հարվածելու հայերին: Օսմանյան կանոնավոր բանակի սպաները և մուսավաթ գործիչները գեներ ու զինամթերք էին բաժանում գյուղացիներին և նրանց հետ զինավարժություններ անցկացնում: Վերջիններս հարձակումներ էին գործում հարևան հայկական գյուղերի վրա, փակում ճանապարհները, թալանում, սպանում կամ գերեվարում պատահած հայ անցորդներին, անվերջ հրաձգությամբ խանգարում շրջակա գյուղերին կատարելու գյուղատնտեսական աշխատանքներ²:

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 85, թ. 2, Ա. Զելեպյան, Չորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, կենսագրական ակնարկ, Եր., 1990, էջ 522, Հ. Միմոնյան, Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Եր., 1996, էջ 323:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 51, թ. 1, Յովակ Ստեփանեան, Արցախեսան կամ Շուշուայ գնդի պատմությունը, «Հայրենիք» ամսագիր, 1935, մարտ, թիվ 5 (149), էջ 87-88, Հ. Կարապետյան, Անդրանիկ, Եր., 1994, էջ 565, Հ. Միմոնյան, նշվ. աշխ., էջ 324-325:

Միսիանի թուրքերն այնքան էին սանձարձակ դարձել, որ բացեիքաց հայտարարում էին, թե մեկ-երկու ամիս հետո ոչ միայն շրջանում, այլև ամբողջ Չանգեզուրում ոչ մի հայ չի մնալու³:

Ինչպես տեսնում ենք, Միսիանի շրջանի թուրքաբնակ գյուղերը դարձել էին Չանգեզուրում մուսավաթականների և գերմանա-տաճկական բանակի ամրակետեր, իսկ Միսիանի տեղական փոքրաթիվ հայկական ուժերը ի վիճակի չէին միայնակ զսպելու թուրք զինված ավազակախմբերին:

Այս պայմաններում անխուսափելի էին դառնում պատժիչ գործողությունները: Նկատի առնելով, որ թշնամին գավառին սպառնում է բոլոր կողմերից, նաև՝ ներսից, Չանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդը, խորհրդակցելով Միսիանի շրջանային կոմիսար Ջախար Տեր-Ղազարյանի և շրջանի պաշտպանական ուժերի հրամանատարների հետ, օգոստոսի 10-ին որոշում է ընդունում՝ օգուղվելով գավառի սահմաններում ժամանակավոր հարաբերական հանգիստ վիճակից՝ Գորիսի ուժերով առաջին հերթին զսպել Միսիանի թուրքական գյուղերին՝ չեզոքացնելու ներքին վտանգը⁴:

Ազգային խորհուրդը դիմում է Գորիս քաղաքում գտնվող Անդրանիկին՝ իր գործառնալով օգնության գնալ Միսիանի հայությանը: Ջորավարը տալիս է իր համաձայնությունը⁵:

Ռազմատենչ ավազակային հարձակումներով, հանդուգն կողոպուտներով և սպանություններով հատկապես աչքի էին ընկել Միսիան-Գորիս խճուղու մերձակայքի Աղուղի, Վաղուղի և Ուրուտ գյուղերի թուրքերը: Նրանք բացեիքաց հայտարարում էին, որ երբեք չեն ենթարկվի ոչ Չանգեզուրի Ազգային խորհրդին և ոչ էլ Անդրանիկին, որ իրենց համար միակ օրինական իշխանությունը Ադրբեջանի կառավարությունն է:

Միսիանին օգնության գնացող Անդրանիկի ճանապարհին անցնում էր հենց այդ գյուղերով: Չորքին խստագույնս հրամայված էր՝ գնալ միմիայն կենտրոնական խճուղով, խիտ շարքերով և կանգ չառնել թուրքաբնակ գյուղերի մոտ:

Չորամասը նոր էր մտել Միսիանի տարածք, երբ Գորիս-Միսիան խճուղու ձախ կողմում գտնվող Աղուղի և Վաղուղի գյուղերի զինված ավազակախմբերը, որոնք տաճիկ և մուսավաթ սպաների գլխավորությամբ վաղօրոք դիրքավորվել էին ճանապարհի երկու կողմերում, բացեցին հրացանային կրակ: Կոիվը կարճ տևեց: Ուժերը անհավասար էին: Չկարողանալով դիմակայել հայ մարտիկների զարկերին՝ Վաղուղիի զինյալները թողեցին դիրքերը, խմբերով սկսեցին փախչել դեպի գյուղ⁶:

Շարունակելով ճանապարհը՝ գորավարը կանգ չառավ Միսիանի կենտրոն Դարաքիլիսայում, այլ ուղղություն վերցրեց դեպի Անգեղակոթ: Ճանապարհին գորքը հանդիպեց նաև Շաքիի թուրքերի զինված դիմադրությանը: Չանգեզուր մտնելու նպատակով Խալիլ բեյը Նախիջևանից ամուր կապ էր հաստատել Միսիանի թուրքաբնակ բոլոր գյուղերի, հատկապես Շաքիի հետ⁷:

³ Տե՛ս Հ. Միմոնյան, նշվ. աշխ., էջ 324:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 35, թ. 1, **Յովակ Ստեփանեան**, նշվ. հոդվածը, էջ 85-86, Հ. Միմոնյան, նշվ. աշխ., էջ 325:

⁵ **Յովակ Ստեփանեան**, նշվ. հոդվածը, էջ 86:

⁶ Տե՛ս "Наше время", № 4, 3 января, 1919, **Յովակ Ստեփանեան**, նշվ. հոդվածը, էջ 87, **Նույնի՝** Անդրանիկը Միսնեաց երկրում, «Վեմ», 1936, մայիս-հունիս, էջ 77-78, Ա. Չելեպյան, նշվ. աշխ., էջ 518-520, Հ. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 567-568, Հ. Այվազյան, Ջորավար Անդրանիկ և Հովհաննես Թումանյան, Եր., 2004, էջ 215-216, Հ. Միմոնյան, նշվ. աշխ., էջ 335-336:

⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 84, թթ. 1-3, 13, գ. 85, թ. 1, **Յովակ Ստեփանեան**, նշվ. հոդվածը, էջ 87, **Նույնի՝** Անդրանիկը Միսնեաց երկրում, էջ 78, Հ. Միմոնյան, նշվ. աշխ., էջ 336-337, Հ. Այվազյան, նշվ. աշխ., էջ 216:

Միսիանի մյուս թուրքաբնակ գյուղերը գերադասեցին խոհեմություն հանդես բերել և հայտարարեցին Չանգեզուրի իշխանություններին ենթարկվելու մասին:

Օգոստոսի 30-ին զորավարն իր զորքով ու գաղթականներով հասավ Անգեղակոթ և այստեղ ժամանակավորապես հաստատեց իր ռազմակայանը⁹:

1918 թ. սեպտեմբերի առաջին օրերին Չանգեզուրի սահմաններում հարաբերական հանգիստ էր, որովհետև տաճիկները և Ադրբեջանի թուրքերը, իրենց ողջ ուժերը նետելով Բաքվի կոմունայի դեմ, բնականաբար թուլացրել էին ճնշումը Արցախի ու Չանգեզուրի վրա:

Օգտվելով դրանից՝ Անդրանիկը լծվեց հարվածող զորամասի շարքերի վերակազմության, տեղական զինված ուժերի թվի ավելացման ու մարտունակության բարձրացման, շրջանի պաշտպանության ամրապնդման գործին:

Անդրանիկը այդ գործը առաջին հերթին սկսեց հենց Անգեղակոթից, որը գտնվում է Նախիջևանից Միսիան եկող ճանապարհի սկզբին՝ Բիչանակ լեռան ստորոտում: Անհրաժեշտ էր փակել ճանապարհի մուտքը և պատնեշ ստեղծել թըշնամու աղբ: Ըստ այդմ՝ զորավարը հարվածող զորամասի մի հարյուրյակ ուղարկեց Բիչանակ լեռան բարձունքը՝ հսկելու ճանապարհը¹⁰:

1918 թ. սեպտեմբերի 5-ին Անդրանիկը Միսիանի ընդհանուր շրջանային կոմիսար Չաքար Տեր-Ղազարյանի խնդրանքով խորհրդակցության հրավիրեց Միսիանի 4 ենթաշրջանների կոմիսարներին և 14 հայ գյուղերի ներկայացուցիչներին: Օրակարգում դրված էր չորս հարց՝ հարվածող զորամասի՝ Միսիանի շրջանում մնալու և նրա պահանջներին բավարարություն տալու միջոցները, զորահավաք անցկացնելու հարցը, տեղի վաշտերի պարենավորման խնդիրը, Միսիանի շրջանի ընդհանուր կոմիսարի ընտրությունը¹¹:

Չորավարը ելույթ ունեցավ, ապա ցանկացավ պարզել, թե Միսիանը կկանգնի՞ իր կողքին, թե՞ ոչ, սիսիանցիները փափագո՞ւմ են զորավարին տեսնել իրենց մոտ, թե՞ ոչ: Նրանք կուզեն կովե՞լ, թե՞ խաղաղ ապրել ու ենթարկվել ամեն տեսակ ռեժիմի: Եթե համաձայնեին, որ զորավարը մնա, այդ դեպքում պետք է զորահավաք կատարվեր և ապագայում որևէ դժգոհության տեղիք չտալու համար, հանձն առնվեր զորամասի պարենավորման հոգսը: Ապրելու համար, շեշտում էր Անդրանիկը, սիսիանցիները պետք է պատրաստ լինեն մեռնել զենքը ձեռքին: Ինչ վերաբերում է շրջանի ռուս մոլոկաններին, ապա նրանք իրենց նախնիների պես չպետք է հրաժարվեն արյուն թափելուց այս լեռների վրա, որը նաև իրենցն է¹²:

Իր ելույթում Չախար Տեր-Ղազարյանը հայտարարեց, որ Միսիանի հայությունը գոհ է և ուրախ, որ զորավարը ժամանել է իրենց երկրամաս: Նույն միտքն արտահայտեց նաև Դարաբասի ենթաշրջանի կոմիսար Դավիթ Տեր-Սկրտչյանը¹³:

Առաջին ենթաշրջանի (Բազարչայի) կոմիսար Ռոդիոն Կամսինինը իր ելույթում նշեց, որ իրենից առաջ հանդես եկած երկու կոմիսարների հայտարարությունը, թե Միսիանը պատրաստ է օգնելու գեներալին, չպետք է լուրջ ընդունել. դա նրանց անձնական կարծիքն է: Անհրաժեշտ է ժողովրդի կարծիքն իմանալ, այլ ոչ

⁹ Տե՛ս Ստեմեյ, Անդրանիկը Չանգեզուրի մէջ, «Հայրենիք», 1962, հուլիս-օգոստոս, թիվ 7-8 (434), էջ 16, Հ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 337:

⁹ Յովակ Ստեփանեան, Անդրանիկը Միսիանաց երկրում, «Վեմ», 1936, հուլիս-հոկտեմբեր, էջ 59, Հ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 357:

¹⁰ Տե՛ս «Наше время», № 4, 1919, Յովակ Ստեփանեան, նշվ. հոդվածը, էջ 89, նույնի՝ Անդրանիկը Միսիանաց երկրում, հուլիս-հոկտեմբեր, էջ 59, Հ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 354, Հ. Այվազյան, նշվ. աշխ., էջ 218:

¹¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 30, թ. 5, Յովակ Ստեփանեան, նշվ. հոդվածը, էջ 89, Հ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 354-355, Հ. Այվազյան, նշվ. աշխ., էջ 218:

¹² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 30, թ. 5, Հ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 355:

թե մեկ-երկու դեկավարի: Այդ նպատակով պետք է ամեն մի գյուղից հավաքել 5-6 ներկայացուցիչ և բոլորի ներկայությամբ քննության առնել շատ լուրջ խնդիրը: «Գեներալի գորամասի հիմնական ուժին՝ թվով 700 զինվորի մենք չենք կարող կանոնավոր կերակրել»,- վերջում շեշտեց նա¹⁵:

Կասսինինի ելույթից հետո կրկին համոզե եկավ գորավարը և նշեց, որ նրա ասածը ճիշտ է, և ինքն էլ խիստ մտահոգ է, քանի որ մինչև այժմ զինվորները մերկ ու քաղցած են, իսկ տեղացիներից ոչ մեկը դեռ ինքնական որևէ օժանդակություն ցույց չի տվել: Անդրադառնալով Կասսինինի այն առաջարկին, թե հարցը որոշելու համար պետք է ընդհանուր ժողով հրավիրել, Անդրանիկն ասաց. «Ոչինչ, գումարեք ժողովը և որոշում տվեք: Իսկ մինչ որոշում ընդունելը պետք է զինվորներին նայեք ու կերակրեք»¹⁶:

Չորավարը առաջարկեց այլևս չչարունակել խորհրդակցությունը, դադարեցնել մտքերի փոխանակումը և օրակարգի բոլոր հարցերը տեղափոխել ընդհանուր ժողով, որը որոշվեց հրավիրել առաջիկա կիրակի օրը՝ սեպտեմբերի 8-ին, որպեսզի յուրաքանչյուր կոմիսար ժամանակ ունենա ժողովրդի ներկայացուցիչների հետ խորհրդակցելու և արդյունքը գրավոր ներկայացնելու ժողովի նախագահությանը¹⁷:

Պահը հրամայաբար թելադրում էր առավելագույնն անել տեղական ուժերի շարքերի ընդլայնման ու ամրապնդման համար: Չորավարը համոզված էր, որ Միսիսիանի պաշտպանությունը շարունակելու է վտանգված մնալ, եթե տեղական զինվորական ուժերը մնան խղճուկ վիճակում: Հայ գյուղերի մի մասի երիտասարդները խուսափում էին զինվորական ծառայությունից, իսկ վաշտերի մեջ ընդգրկվածները ծառայությունը կատարում էին անփույթ, ավելին՝ նրանցից շատերը փախչում էին տները և դրա համար որևէ մեկի առջև պատասխանատվություն չէին կրում:

Սեպտեմբերի 7-ին Անդրանիկն Անգեղակոթից Միսիսիանի շրջանի բոլոր չորս ենթաշրջանների կոմիսարներին հրաման արձակեց գորահավաք կազմակերպելու և այն անթերի անցկացնելու մասին: Համաձայն գորավարի տված գորահավաքի շրջաբերական հրամանի՝ գորակոչվում էին 25-30 տարեկան երիտասարդները: Նրանց բոլոր կարիքները պարտավոր էին հոգալ գյուղական համայնքները: Չինժառայության կանչվածները իրենց հետ պիտի բերեին երեք օրվա հաց: Չորահավաքի ենթակա չէին Միսիսիանի շրջանային խորհրդի անդամները, Չանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի ներկայացուցիչները, շրջանային ու գյուղական կոմիսարները, գյուղական դատավորները, գյուղի զինվորական խմբապետը և տան միակ նեցուկ աշխատավորը: Եթե ընտանիքում կար երկու արու զավակ, ապա գորակոչվում էր նա, ով մինչ այդ ծառայել էր, երեք և ավելիի դեպքում չէր գորակոչվում ամենափոքրը: Չինվորական ծառայության կանչվածների ցուցակները կազմելու էին գյուղերի կոմիսարները: Իսկ գյուղական խմբապետները պիտի ցուցակագրեին գյուղերում եղած բոլոր զենքերը, փամփուշտները և առհասարակ ռազմամթերքը, ռազմաճակատներից բերված պետական բոլոր իրերը¹⁸: Հրամանի համաձայն շրջանում գորակոչված բոլոր երիտասարդները սեպտեմբերի 10-ի առավոտյան ժամը 10-ին պետք է հավաքված լինեին Անգեղակոթ գյուղում: Վերջում հրամանն ազդարարում էր. «Որոշեալ ատենին չներկայացողները պիտի նկատուին դասալիքներ և պիտի ենթարկուին մահապատժի»¹⁹:

¹⁵ ՀԱՍ, ֆ. 370, ց. 1, գ. 30, թ. 5, Հ. Միմոնյան, նշվ. աշխ., էջ 355:

¹⁶ ՀԱՍ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 5-ի շրջերես, Հ. Միմոնյան, նշվ. աշխ., էջ 356:

¹⁷ Տե՛ս նույն տեղը:

¹⁸ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 370, ց. 1, գ. 47, թ. 7, մակ' թ. 14 և շրջերես, "Наше время", № 4, 1919, Յովակ Ստեփանեան, նշվ. հոդվածը, «Հայրենիք», 1935, ապրիլ, թիվ 6 (150), էջ 101:

¹⁹ ՀԱՍ, ֆ. 370, ց. 1, գ. 47, թ. 7:

Չորահավաքը թեև մեծ դժվարությամբ, բայց ընդհանուր առմամբ հաջողությամբ կատարվեց: Չորակոչիկներով համալրվեցին շրջանի մոսբաքաձ վաշտերը, կազմակերպվեցին տեղական զինական մոր խմբեր: Եթե մինչ այդ տեղական ինքնապաշտպանական բոլոր ուժերը ենթարկվում էին Չախար Տեր-Ղազարյանին, ապա Չորահավաքից հետո դրանք միավորվեցին մի գումարտակի մեջ, որի հրամանատար նշանակվեց փոխգնդապետ Հայկ Գրիգորյանը¹⁸:

Ձիմվորական խմբապետների հրամանով գյուղացիները հարկավոր վայրերում դիրքեր էին փորում. սահմանվեց հերթով դիրքապահություն՝ հատկապես զիշերները, բոլոր գյուղերի, հատկապես՝ գյուղերի և շրջանային կենտրոն Ղարաքիլիսայի միջև ստեղծվեց կանոնավոր կապ:

Նորաստեղծ վաշտերն անմիջապես գրավեցին Բազարչայ-Գյումուր-Գժաձոր-Բնունիս-Թազագյուղ-Ախլաթյան-Ալիլու ռազմագծերը¹⁹:

Միսիանին սահմանակից Նախիջևանում անարգել իշխող տաճիկ Խալիլ բեյը և տեղական մուսավաթական ղոչիները աչք էին տնկել հայկական հարուստ շրջանի վրա: Տաճկական հրամանատարությունը սիսիանցիներին փորձում էր ահաբեկել՝ հայտարարելով, թե հարձակման համար արդեն պատրաստ է 20 հազար ասկյար²⁰:

Նախիջևանի կողմից թուրքական զորքերի հարձակումը պետք է զուգակցվեր Միսիանի աղբրեջանական բնակչության զինված ելույթի հետ²¹:

Նույն օրը՝ սեպտեմբերի 7-ին, զորավարը Անգեղակոթից նամակ է գրում Նախիջևանին սահմանակից հայ գյուղերի կոմիսարներին և պահանջում վճռական դիմադրություն ցույց տալ տաճիկ զորքերին, եթե նրանք փորձեն ներխուժել իրենց տարածքները: Նամակում ասված էր. «Հրամայում եմ անմիջապես մոպիլիզացիա ընելք ու մի երկու բոտայով բռնեք ձեր սարերն ու դիմադրեք ... Այստեղ որոշուած է մոպիլիզացիա ընել: Միսիանը որոշում է կռվել: Ձեր կողմանե անձնատուր և զինաթափ ընելը ամբողջ Չանգեզուրը այդ գործը պիտի մկատե դավաճանութիւն հայ ազգի դեմ»²²:

Անդրանիկը առաջնահերթ խնդիր համարեց Նախիջևանին սահմանակից Արավուսի և Շխլյարի ձորերի Չոմարթլու, Օրթաբյուզ, Արավուս աղբրեջանաբնակ գյուղերի հնազանդեցումը և սահմանի այդ վտանգված հատվածի ամրապնդումը: Օսմանյան հրամանատարությունն արդեն զորքեր էր մտցրել այդ գյուղերը²³:

Հետախուզական տեղեկությունների համաձայն թուրք-մուսավաթական ուժերը Միսիանի վրա պետք է հարձակվեին սեպտեմբերի կեսերին, ուստի զորավարը որոշեց կանխել թշնամուն և ինքը մախահարձակ լինել: Նա պարզ տեսնում էր, որ եթե տաճկական ուժերին հաջողվի հաստատվել այդ գյուղերում, որոնք իրենց դիրքով իշխող էին դաշտերի վրա, ապա նշանակում է հենց սկզբից մախաձեռնությունը տալ թշնամուն և վտանգի ենթարկել ամբողջ շրջանը²⁴:

¹⁸ Տե՛ս Զովակ Ստեփանեան, Անդրանիկը Միսնեաց երկրում, հուլիս-հոկտեմբեր, էջ 64, Հ. Միսնոյան, նշվ. աշխ., էջ 363:

¹⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 6, ք. 14, Զովակ Ստեփանեան, Անդրանիկը Միսնեաց երկրում, հուլիս-հոկտեմբեր, էջ 64, Հ. Միսնոյան, նշվ. աշխ., էջ 363:

²⁰ Տե՛ս Զովակ Ստեփանեան, Անդրանիկը Միսնեաց երկրում, հուլիս-հոկտեմբեր, էջ 61, Հ. Միսնոյան, նշվ. աշխ., էջ 365:

²¹ Տե՛ս Զովակ Ստեփանեան, նշվ. հոդվածը, «Հայրենիք», 1935, թիվ 5 (149), էջ 87-88, Հ. Միսնոյան, նշվ. աշխ., էջ 365:

²² ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 6, ք. 14:

²³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 15, ք. 24:

²⁴ Տե՛ս Քիրս Սարոտ, Ղարաքաղի կոիվների շուրջը, «Ճշդում»-ի ճշդումը, «Հայրենիք», 1934, մարտ, թիվ 5 (137), էջ 30, Զովակ Ստեփանեան, Անդրանիկը Միսնեաց երկրում, հուլիս-հոկտեմբեր, էջ 61, Հ. Ավագյան, նշվ. աշխ., էջ 219:

Ջորավարը նույն օրը երեք հոգուց բաղկացած պատգամավորություն է ուղարկում Ջոնաթթու և Օրթաքյուզ գյուղերը՝ օսմանցիներից գաղտնի բանակցություններ վարելու տեղացիների հետ, որպեսզի նրանք ձեռնպահ մնան հայկական Միսիանի վրա հարձակվելուց, բայց պատգամավորները հետ չեն դառնում. թուրքերը նրանց սպանել էին²⁵:

Սեպտեմբերի 9 (22)-ին Անդրանիկի հրամանով կայացավ Միսիանի հայ գյուղերի ներկայացուցիչների ժողով, որը քննության առավ նշված թուրքաբնակ երեք գյուղերի խնդիրը: Հարցը ներկայացրեց զորավարը և մամրամասն բացատրեց այդ գյուղերի ռազմաստրատեգիական նշանակությունը: Նա շեշտեց, որ գործողությունը ծրագրվում է զուտ ռազմագիտական նկատառումներով, որովհետև տաճկաց ռազմական ուժերի՝ Միսիան մտնելու միակ հարմար ճանապարհը անցնում է այդ գյուղերի տարածքներով: Գործողությունը հաջող իրականացնելու դեպքում, ասում էր զորավարը, հայերի ձեռքը կանցնի ստրատեգիական կարևորագույն նշանակություն ունեցող ճանապարհը և, ըստ այդմ, տաճիկ հրոսակները կգրկվեն Միսիան ներխուժելու և տեղի հայությանը ոչնչացնելու հնարավորությունից: Հակառակ դեպքում դա կարող է իրական հեռանկար լինել, մանավանդ որ շրջանի մեծաքանակ թուրք զանգվածն իր բարբարոսություններով ոչնչով չէր տարբերվում տաճիկ զավթիչներից²⁶:

Եթե թուրքերին հաջողվեր Նախիջևանից Միսիան ներխուժել Արավուս-Շխյար ուղղությամբ, ապա նրանք կմտնեին Աղուդի ու Վաղուդի թրքաբնակ գյուղերը, և Միսիանը կկտրվեր Գորիսից²⁷:

Ժողովականների մի մասը այն կարծիքին էր, թե նշված թրքաբնակ գյուղերի վրա հարձակման դեպքում ուրիշ տեղերից կարող էին գալ և Նախիջևանում գտնվող թշնամական զորքերին միանալ տաճկական ուրիշ զորամասեր ու համատեղ ուժերով ներխուժել Միսիան: Այդ դեպքում շրջանը չէր կարող կանգնեցնել թշնամու մեծաքանակ զորքը, ուստի հայությունը ստիպված կլիներ, տուն ու տեղ թողած, փրկություն որոնել Գորիսում և Ղափանում, կամ Հայաստանի Հանրապետության Վալոց ձորի՝ գրեթե հացազուրկ զավառում: Ջորավարը վճռականորեն հանդես եկավ այդ տեսակետի դեմ՝ ասելով. «Միևնույն է, ես իմ զորամասով սկսելու եմ արշավանքը... Ինչ վերաբերվում է Աղուդու և Վաղուդու ձորին, [ապա] առանց ձեր կարծիքը հարցնելու՝ պիտի ավարտին հասցնեմ կիսատ թողած գործս...»²⁸: Այնուհետև Անդրանիկը հայտարարում է, որ Շխյար ձորի երեք գյուղերը գրավելուց հետո, եթե նախիջևանից հայ զաղթականները կհամաձայնեն ապրել այնտեղ, ապա նրանց խնդրանքը անմիջապես կբավարարվի, իսկ եթե ոչ, Օրթաքյուզը և Ջոնաթթուն կպահպանվեն հետագա վերաբնակեցման համար, իսկ Արավուսը կմատնվի կրակի²⁹:

Թուրքաբնակ երեք գյուղերի մասին տված երկար բացատրությունից հետո Անդրանիկը հեռանում է՝ ժողովականներին հնարավորություն տալով վճիռ կայացնելու ազատորեն: Ժողովը որոշում է Շխյարի ձորը թուրքերից մաքրել ամենից առաջ տեղացիներից նոր կազմակերպված վաշտերի միջոցով, բայց հարվածող զորամասի աջակցությամբ³⁰:

²⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 15, քք. 24-25:

²⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 35, ք. 7 և շրջերես, **Յովակ Ստեփանեան, Անդրանիկը Միսիանաց երկրում, հուլիս-հոկտեմբեր, էջ 62, Հ. Միմոնյան, նշվ. աշխ., էջ 367-368:**

²⁷ Տե՛ս **Յովակ Ստեփանեան, Անդրանիկը Միսիանաց երկրում, հուլիս-հոկտեմբեր, էջ 62, Հ. Միմոնյան, նշվ. աշխ., էջ 366:**

²⁸ ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 35, ք. 7-ի շրջերես, **Հ. Միմոնյան, նշվ. աշխ., էջ 367-368:**

²⁹ Տե՛ս **Հ. Միմոնյան, նշվ. աշխ., էջ 367-368, Հ. Ավագյան, նշվ. աշխ., էջ 219-220:**

³⁰ Տե՛ս նույն տեղը:

Սակայն գորավարը, հաշվի առնելով խնդրի լրջությունը, նպատակահարմար գտավ գործողությունն իրականացնել բացառապես իր գորամասի ուժերով:

Արդեն մանրամասն ուսումնասիրած լինելով շրջանի տեղանքը՝ Անդրամիկը, նախքան նշված թրքաբնակ գյուղերի վրա արշավանք ձեռնարկելը, կարգադրեց ամուր փակել Նախիջևանից Միսիան եկող բոլոր ուղիները:

Սեպտեմբերի 10(23)-ին Անդրամիկի գլխավորությամբ հարվածող գորամասի ստորաբաժանումները շեշտակի մտան նշված գյուղերը: Կարճատև դիմադրությունից և մի քանի տասնյակ զոհ տալուց հետո թուրք և տաճիկ զինված խմբերը ջախջախվեցին ու քաշվեցին սահմանից այն կողմ³²: Փախան մաս այդ գյուղերի թուրք բնակիչները, որոնք սերտորեն համագործակցել էին օսմանյան ուժերի հետ: Սրանց տված զոհերի թիվը մեծ չէր, քանի որ հայկական գորամասերի առջև դրված խնդիրը բնավ էլ այդ գյուղերի բնակիչներին ջարդելը չէր: Այնուամենայնիվ, թշնամու պարտությունը կատարյալ էր³³:

Թուրքական անհնազանդ գյուղերի դեմ ձեռնարկված գործողությունները բարենպաստ իրադրություն ստեղծեցին Միսիանի շրջանի և ողջ Չանգեզուրի համար թե՛ ռազմաքաղաքական և թե՛ հաղորդակցական-տնտեսական տեսակետից:

Ջոմարթլու, Օրթաքյուզ և Արավուս գյուղերից հետո հերթը հասավ Ուրուտ թրքաբնակ գյուղին: Ուրուտի գրավման գործը Անդրամիկը հանձնարարեց Դարաբասի ենթաշրջանի կոմիսար Դավիթ Տեր-Մկրտչյանին՝ խոստանալով օգնության ուղարկել հարվածող գորամասի մեկ վաշտ:

Դարաբաս գյուղի տեղական ուժերը Տեր-Մկրտչյանի գլխավորությամբ պաշարեցին Ուրուտը: Թուրքերը հարձակվեցին Դավթի ջոկատի վրա: Դարաբասի զինվորները համարձակ գրոհով նրանց հանեցին դիրքերից և մտան գյուղ: Մեչիդից և երկու տներից թուրքերը կրակ բացեցին, որի հետևանքով սպանվեց մեկ, վիրավորվեցին երեք հոգի: Անդրամիկին ուղարկած զեկուցագրում Դավիթ Տեր-Մկրտչյանը գրում է. «Այդ պահին հայ տղաները բարձրացան մեչիդի կտուրը, երդիկով ռումբ գցեցին, և թուրք զինյալները հանձնվեցին: Մութը վրա հասավ, և անձրև սկսվեց, և ես տղաներիս հետ քաշեցի: Այժմ գյուղը դատարկ է, առավոտյան նորից մտնելու ենք գյուղ: Մպասում եմ Ձեր կարգադրությանը»³⁴:

Այնուհետև Դավիթը հաղորդում է, որ իրենք պատրաստ են հարձակվելու մաս Վաղուղի ավազակաբարո գյուղի վրա, և խնդրում է գորավարին շարժվել դեպի Վաղուղի՝ համատեղ ուժերով գյուղը գրավելու համար: «Մպասում ենք անհամբեր վաղը մաքրված տեսնել Վաղուղու ձորը Չեզ հետ միասին: Չգիտեմ ինչ փոփոխություն եղավ, որ չեկաք: Գրեցեք, խնդրում եմ»³⁵:

Թե ինչու Անդրամիկը զինվորներ չուղարկեց դարաբասցիներին միանալու և համատեղ գրոհելու Վաղուղին, մեզ հայտնի չէ, քանի որ արխիվներում չկան այդ մասին վկայություններ: Ենթադրում ենք, որ գորավարը մտածում էր, թե ինքն անպայման վերադառնալու է Գորիս և ճանապարհին, մինևույն է, ընդհարվելու է Վաղուղիի թուրքերի հետ, և այն ժամանակ իր գորամասի հիմնական ուժերով ավելի դյուրին կլինի գյուղը մաքրել ելուզակ բանդաներից:

³² Տե՛ս Ստեմել, նշվ. աշխ., էջ 17:

³³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 21:

³⁴ Տե՛ս Արսեն Միքայելեան, Դարաբասի վերջին դեպքերը, «Հայրենիք», 1923, մայիս, թիվ 7, էջ 162, Յովակ Ստեփանեան, նշվ. հոդվածը, 1935, թիվ 6(150), էջ 102-104, նույնի՝ Անդրամիկը Միսնեաց երկրում, հուլիս-հոկտեմբեր, էջ 62-63, Ստեմել, նշվ. աշխ., էջ 17, Ա. Չեկեյան, նշվ. աշխ., էջ 522-523, Լ. Միսոնյան, նշվ. աշխ., էջ 368-369, Լ. Ավագյան, նշվ. աշխ., էջ 220:

³⁵ ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 6, թ. 23:

³⁶ ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 6, թ. 23-ի շրջերես:

Նույնպիսի գործողություններ ձեռնարկվեցին նաև Միսիանի ևս 14 թրքաբնակ գյուղերի նկատմամբ և այդ ձևով վնասագերծվեցին գավառամասի առավել վտանգված վայրերը: Երջանում թրքաբնակ մյուս գյուղերն այլևս չէին կարող խարխիս ծառայել Նախիջևանից հարձակվել պատրաստվող տաճիկների և մուսավաթականների համար: Նրանք խիստ մախազգուշացում ստացան: Անդրանիկը թուրքերին կոչ արեց հանգիստ մնալ և թշնամություն չանել հայերի հետ: Միսիանի թրքաբնակ գյուղերի մեծ մասը ստիպված էր, զոնե խոսքով, ընդունել Ջանգեզուրի Ազգային խորհրդի իշխանությունը³⁶:

Ինչպես նշվեց վերը, սեպտեմբերի 1-ին Անդրանիկի հրավիրած խորհրդակցությունը նախատեսել էր սեպտեմբերի 8-ին կազմակերպել համաշրջանային ժողով, բայց այն նշանակված օրը տեղի չունեցավ, քանի որ գյուղերի կոմիսարները Անդրանիկին խնդրել էին 3-4 օրով երկարացնել ժամկետը՝ Միսիանում հարվածող զորամասի մնալու մասին ժողովրդի հիմնավոր կարծիքը իմանալու համար:

Սեպտեմբերի 12-ին Անգեղակոթի եկեղեցում տեղի ունեցավ Միսիանի հայ և ռուս 14 գյուղերի կոմիսարների ու 20 ժողովրդական ներկայացուցիչների ժողով, որին ներկա էին նաև Հարվածող զորամասի և Ջանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի պատվիրակները³⁷:

Օրակարգի առաջին հարցը Հարվածող զորամասի՝ Միսիանում մնալու կամ չմնալու հարցն էր: Պարզաբանելով օրակարգի հարցը՝ զորավար Անդրանիկն ասաց, թե ինքը և իր զինվորները չեն եկել վրդովելու ժողովրդի հանգիստը և վնասելու նրան: Եթե սիսիանցին փափագ հայտնի, որ զորամասը մնա, կմնա, բայց անհրաժեշտ է նախ զորահավաք անել, բավարարել զորքի պահանջները:

Երջանային կոմիսար Ջախար Տեր-Ղազարյանը հայտնեց, թե Միսիանի ժողովուրդը փափագում է, որ զորավարն իր զորքով մնա շրջանում, և խոստացավ բավարարել զորքի կարիքները:

Դարաբասի ենթաշրջանային կոմիսար Դավիթ Տեր-Սկրտչյանը գտնում էր, որ խնդիրը միայն զորամասի մնալը չէ, այլ նաև այն, որ առանց Անդրանիկի լուրջ միջամտության հնարավոր չի լինի Միսիանում ստեղծել տեղական ամուր զինվորական կազմակերպություն:

Ազգային խորհրդի ներկայացուցիչ Արշակ Շիրինյանն այն տեսակետը հայտնեց, որ Միսիանի շրջանն ամեն պարագայում անձնատուր չի լինելու: «Միսիանը կովող շրջան է և շատ լավ կարելի է կովել, եթե կազմակերպված լինի: Հայի և մոլոկանի միջև էլ թուրքերը տարբերություն չեն դնելու, եթե կարողանան հաղթահարել Միսիանի ուժը»³⁸:

Հավանություն տալով Շիրինյանի խոսքերին՝ Անդրանիկն ասաց, որ իրենց լինել-չլինելու հարցը կախված է մեծ պետությունների պայքարի արդյունքից: «Կրճալ ըլլալ որ մեր ցեղը բնաջնջուի, բայց գեթ Ղարաբաղը (նկատի ունի Ջանգեզուրը - Ա. Ս.) պետք է լավ անուն թողնուի: Կոուիմք թե չկոուիմք պիտի

³⁶ Տե՛ս **Յովակ Ստեփանեան**, նշվ. հոդվածը, 1935, թիվ 6(150), էջ 102-104, **Մուլնի՝ Անդրանիկը Միսիանաց երկրում, հուլիս-հոկտեմբեր**, էջ 64-65, **Ստեմնել**, նշվ. աշխ., էջ 17, **Հ. Միմոնյան**, նշվ. աշխ., էջ 369, **Հ. Այվազյան**, նշվ. աշխ., էջ 218:

³⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 30, թթ. 7-10, Ե. Զաջունի, Հայկական Առանձին Հարվածող Չորամասը: Ժեներալ Անդրանիկ, Պոսթըն, 1921, էջ 101, **Յովակ Ստեփանեան**, նշվ. հոդվածը, 1935, թիվ 6(150), էջ 100-101, **Մուլնի՝ Անդրանիկը Միսիանաց երկրում, հուլիս-հոկտեմբեր**, էջ 60, **Ստեմնել**, նշվ. աշխ., էջ 17, **Ա. Չելեսյան**, նշվ. աշխ., էջ 520, **Հ. Կարապետյան**, նշվ. աշխ., էջ 570, **Հ. Միմոնյան**, նշվ. աշխ., էջ 358:

³⁸ ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 30, թ. 9, **Հ. Միմոնյան**, նշվ. աշխ., էջ 359:

միանանք: Մեր ուժերով մեծ յաղթանակ չենք կրնար տանիլ, բայց մենք մեր սկզբունքներէն շեղելու չենք. եթէ Ղարաբաղը մէկ տիտիզիա հանէ՝ վեց ամիս ալ կապրի, ի հարկէ յարձակողական ճեղք չէ, այլ ինքնապաշտպանութիւն պիտի կազմակերպուի»³⁹:

Օրակարգի առաջին հարցի առթիւ ժողովն ընդունեց հետևյալ որոշումը.

«Ժողովը միաձայնութեամբ որոշեց ոչ մի կերպ չհամակերպել Ադրբեջանի կամ տաճիկ իշխանութեան զինաթափութեան հնարավոր առաջարկին և դիմադրութիւն ցույց տալ մինչև վերջ: Հետևաբար՝ խնդրել գեներալ-մայոր Անդրանիկին, որ իր և մյուս զորամասերը մնան Սիսիանում կամ այն շրջաններում, որոնք զինվորական տեսակետով հարմար կնկատվեն զինվորական իշխանութեան կողմից: Իսկ խառն (տեղացի և դոսի) զորամասերի պարենավորման ծանրութիւնը պիտի բաժանվի Ղափանի, Գորիսի և Սիսիանի շրջանների վրա՝ համեմատական չափով: Միաժամանակ ներկայացուցիչները պարտավորվում են զորամասերի կարիքների համար առձեռն հավաքել, Շրջանային կոմիսարներու միջոցով, 6000 փութ ցորեն, 1000 փութ գարի և 50 փութ յուղ, որոնց կենտրոնացման վայրը ցույց կտա գեներալը»⁴⁰:

Այնուհետև համաշրջանային ժողովը որոշեց հայտարարել նոր զորահավաք՝ նախ՝ զորակոչելով 20-25, ապա՝ 25-30 տարեկաններին: Յուրաքանչյուր զինվոր իր հետ պետք է բերեր իր հրացանն ու որոշ թվով փամփուշտ: Եթէ զինվորը հրացան չունենար, այն դեպքում տարիքավորների ունեցած հրացանները տրվելու էր երիտասարդներին⁴¹:

Կրկին խոսք առնելով՝ զորավարն ասաց, որ շրջանի ամբողջ ժողովուրդը պետք է իր խղճով հրապարակ բերի բոլոր այն ինչքերը՝ ցորեն, տրեխ, գուլպա, ունեցած պետական գույքը, և հանձնի զինվորական իշխանութեանը, որպեսզի զորակոչվածները օգտվեն դրանից⁴²:

1918 թ. սեպտեմբերի երկրորդ կեսին Չանգեզուրի թուրք բնակչության հակահայկական ըմբոստացումը և խժոժությունները թևակոխել էին ամենաեռուն շրջանը:

Ինչպես Գորիսում, այնպես էլ Սիսիանում, ոչ միայն ղեկավարները, այլև բնակչությունը արտահայտում էր խոր դժգոհություն Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ, որը շարունակում էր կրավորական կեցվածք դրսևորել Չանգեզուրի և Արցախի հանդեպ, և տաճիկների հետ նոր բարդություններ չստեղծելու գզուշավորությունից դրդված՝ ըստ էության ոչ մի աջակցություն չէր ցուցաբերում հայկական այդ երկու երկրամասերին: Սիսիանցիների՝ Երևանի հանդեպ ունեցած տրամադրությունները, ինչ խոսք, համահունչ էին այն խիստ բացասական վերաբերմունքին, որ Անդրանիկը տաժում էր Հայաստանի կառավարության նկատմամբ:

Չանգեզուրը հույսը ամբողջովին կապել էր Անդրանիկի, նրա Հարվածող զորամասի և իր քաջագուն զավակների հերոսական խոյանքների հետ, որը տվյալ իրավիճակում ամենաիրատեսականն էր:

³⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 8:

⁴⁰ ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 8-ի շրջերես, «Наше время», № 4, 1919, Յովակ Ստեփանեան, նշվ. հոդվածը, 1935, թիվ 6(150), էջ 101:

⁴¹ Տե՛ս Յովակ Ստեփանեան, նշվ. հոդվածը, 1935, թիվ 6(150), էջ 101:

⁴² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 30, թ. 9, Յովակ Ստեփանեան, Անդրանիկը Միւնեսաջ երկրում, հուլիս-հոկտեմբեր, էջ 60, Հ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 358:

А. Г. СИМОНЯН - Бои в Сисиане под руководством Андраника против турок и азербайджанцев (август-сентябрь 1918 г.). - 4 августа 1918 г. национальный герой генерал Андраник со своим Ударным соединением и 30 тысячами западноармянских и нахичеванских беженцев вошел в город Горис. Арцах и Зангезур в это время находились в тяжелейшем положении. Обе армянские области были объявлены Азербайджаном своей неотемлемой частью. И османские захватчики, и мусаватистское правительство требовали от армянского населения разоружения и беспрекословного повиновения бакинским правителям.

Сразу по прибытии в Горис Андраник, по просьбе Центрального национального совета Зангезура, принял полномочия Верховного командующего военных сил уезда и повел тяжелейшую борьбу против врага. С конца августа 1918 г. особо затяжные бои развернулись в Сисианском районе, где находились 25 азербайджанских сел, жители которых, подстрекаемые османскими и мусаватистскими агентами, с оружием в руках вели межнациональную борьбу с местным армянским населением, убивая и грабя мирных жителей и угрожая, что в течение одного-двух месяцев полностью очистить весь Зангезур от армянского населения.

Прибыв в Сисианский район, Андраник со своими силами попытался утихомирить разбушевавшихся азербайджанцев. Несмотря на все попытки армянской стороны убедить их подчиниться решениям Центрального национального совета Зангезура и прекратить междуусобную войну, азербайджанцы продолжали свои вражеские действия. В этой ситуации по решению Андраника были захвачены наиболее агрессивные азербайджанские села Агуди, Вагуди, Джомартлу, Ортакюз, Аравус, Урут и оттуда изгнаны вооруженные формирования мусаватистов. Вместе с этим Андраник с большой энергией и упорством взялся за организацию отрядов самообороны армян Сисиана и обеспечение безопасности района.